«ՏԵԽՆՈՄԻՏՔ 2026»

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԻՆԺԵՆԵՐԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ

2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԵՄԱՏԻԿ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ՝ «ՆՈՐԱՐԱՐԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ»

Ընթացակարգ և մասնակցության հիմնական պահանջներ

1. Մրցույթի ընդհանուր նկարագիրը

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի նախաձեռնությամբ կազմակերպվող «Տեխնոմիտք» տեխնոլոգիական և ինժեներական լուծումների ամենամյա բաց մրցույթի 2026 թվականի հիմնական թեմատիկ ուղղությունն է «Նորարարական մարտահրավերներ»-ը: Մրցույթը նախատեսված է դպրոցական, միջին մասնագիտական կրթության (ՄՄԿ) և բուհական թիմերի համար՝ համապատասխան կրթական և տարիքային կատեգորիաներով:

2026 թվականի ձևաչափի առանցքում նորարարական նախագծերի մշակումն ու ցուցադրումն է: Մասնակից թիմերը պետք է ընտրեն կամ ձևակերպեն իրական աշխարհի որևէ խնդիր, առաջարկեն դրա տեխնոլոգիական կամ ինժեներական լուծումը, մշակեն աշխատունակ նախատիպ կամ ծրագրային ցուցադրելի տարբերակ և ներկայացնեն լուծման տեխնիկական հիմնավորումը, փորձարկման արդյունքներն ու հետագա զարգացման հնարավորությունները:

Հիմնական սկզբունք. մրցույթին ներկայացվող աշխատանքը չպետք է սահմանափակվի միայն գաղափարի նկարագրությամբ: Թիմը պետք է կարողանա ցուցադրել իր լուծման գործունակությունը՝ ֆիզիկական նախատիպի, գործող ծրագրային լուծման կամ համակցված համակարգի միջոցով:

2. 2026 թվականի թեմայի՝ «Նորարարական մարտահրավերներ»-ի նկարագիրը

«Նորարարական մարտահրավերներ» ուղղությունը նպատակ ունի բացել մրցույթի թեմատիկ շրջանակը և հնարավորություն տալ մասնակիցներին աշխատելու ժամանակակից գիտության, տեխնոլոգիայի, արդյունաբերության և հասարակության համար արդիական խնդիրների վրա: Նորարարությունը կարող է արտահայտվել նոր տեխնիկական գաղափարով, գոյություն ունեցող լուծման էական բարելավմամբ, տարբեր տեխնոլոգիաների նոր համադրությամբ կամ արդեն հայտնի տեխնոլոգիայի արդյունավետ կիրառմամբ նոր խնդրի լուծման համար:

Մարտահրավերները ձևավորվում են որպես բաց նորարարական մարտահրավեր. թիմը ինքն է ընտրում կամ բացահայտում լուծման արժանի խնդիր և ներկայացնում դրա նորարարական

տեխնոլոգիական լուծումը՝ հիմնավորելով խնդրի արդիականությունն ու առաջարկվող լուծման արժեքը:

Նախագծի գնահատման հիմքում դրվում են խնդրի արդիականությունը, նորարարական մոտեցումը, տեխնիկական որակը, աշխատունակությունը, կիրառելիությունը և հետագա զարգացման ներուժը:

3. Նպատակները

Մրցույթի 2026 թվականի «Նորարարական մարտահրավերներ» ուղղությունը միտված է՝

- զարգացնելու մասնակիցների կիրառական ինժեներական, տեխնոլոգիական և նորարարական մտածողությունը,
- խթանելու իրական խնդիրների բացահայտումը և դրանց համար տեխնոլոգիական լուծումների մշակումը,
- զարգացնելու թիմային և նախագծային աշխատանքի հմտությունները,
- խրախուսելու ստեղծարարությունը, փորձարարությունը և նոր լուծումների փորձարկումը,
- ձևավորելու աշխատունակ նախատիպերի և կիրառելի ծրագրային լուծումների մշակման փորձ,
- բացահայտելու բարձր տեխնոլոգիական և նորարարական ներուժ ունեցող աշակերտներին և ուսանողներին,
- ամրապնդելու ուսումնական հաստատությունների և արդյունաբերական գործընկերների համագործակցությունը,
- ստեղծելու հետագա զարգացման, միջազգային մրցույթների, հետազոտական կամ ստարտափային ծրագրերի համար հեռանկարային նախագծերի հոսք:

4. Մրցութային տարակարգերը ըստ մասնակիցների և թիմերի ձևաչափը

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի տարբեր ուսումնական հաստատությունների ներկայացուցիչները: Հիմնական մրցութային կատեգորիաներն են՝

- Դպրոցական տարակարգ՝ 10-12-րդ դասարաններ աշակերտներ:
- Միջին մասնագիտական կրթության տարակարգ՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներ:
- Բուհական տարակարգ՝ ՀԱՊՀ-ի և Հայաստանի այլ բուհերի ուսանողներ:

Թիմը կազմվում է 2-5 անդամից և կարող է ներկայացնել մեկ ուսումնական հաստատություն կամ ձևավորվել տարբեր հաստատությունների մասնակիցներից: Յուրաքանչյուր թիմ պետք է ունենա թիմի ղեկավար կամ ավագ: Կոնկրետ տարիքային սահմանները և յուրաքանչյուր տարակարգի մասնակցության մանրամասն պայմանները սահմանվում են տվյալ տարվա մրցույթի կանոնակարգով:

Տարբեր տարակարգերում կարող են կիրառվել առաջադրանքների տարբեր բարդության մակարդակներ և գնահատման տարբեր կշիռներ՝ պահպանելով մրցույթի ընդհանուր սկզբունքները:

5. Նորարարական նախագծերի հիմնական տեսակները

5.1. Սարքային նախագծեր (Hardware-Based Projects)

Այս ուղղության նախագծերը պետք է ներառեն ֆիզիկական կամ էլեկտրամեխանիկական բաղադրիչ և ունենան ցուցադրելի աշխատող մոդել կամ նախատիպ: Նախագծերը կարող են վերաբերել ներկառուցված համակարգերին, իրերի ինտերնետին (IoT), ռոբոտատեխնիկային, ավտոմատացմանը, ֆիզիկական ԱԲ-ին, մեխանիկական նախագծմանը, կառավարման համակարգերին, չափման և մոնիթորինգի համակարգերին, կայուն զարգացման, էներգետիկ կամ այլ ինժեներական լուծումների:

5.2. Ծրագրային նախագծեր (Software-Based Projects)

Այս ուղղության նախագծերը պետք է ունենան գործող ծրագրային ցուցադրելի տարբերակ: Դրանք կարող են կիրառել արհեստական բանականություն, մեքենայական ուսուցում, ամպային տեխնոլոգիաներ, վեբ կամ բջջային հավելվածներ, կիբեռանվտանգության լուծումներ, մեծ տվյալների մշակում, բլոկչեյն, տվյալների վերլուծություն կամ այլ ծրագրային տեխնոլոգիաներ:

5.3. Համակցված նախագծեր

Համակցված նախագծերը կարող են միավորել սարքային և ծրագրային բաղադրիչներ՝ ստեղծելով մեկ ամբողջական համակարգ: Այս կատեգորիայում հատկապես կարևոր է ենթահամակարգերի համատեղելիությունը, ինտեգրումը և ամբողջ լուծման կայուն աշխատունակությունը:

6. Առաջարկվող կիրառական ոլորտները

Նորարարական նախագծերը կարող են վերաբերել գիտության և տեխնոլոգիայի տարբեր ոլորտների: Որպես օրինակ կարող են դիտարկվել՝

- ռոբոտատեխնիկա, ավտոմատացում և խելացի համակարգեր
- ֆիզիկական ԱԲ (Physical AI)
- արհեստական բանականություն (AI), մեքենայական ուսուցում (ML) և տվյալների գիտության (Data science) լուծումներ
- ներկառուցված համակարգեր և իրերի ինտերնետ
- արդյունաբերական և արտադրական տեխնոլոգիաներ
- կրթական տեխնոլոգիաներ (EdTech)
- գյուղատնտեսական տեխնոլոգիաներ (AgriTech)
- առողջապահական և կյանքի որակի բարելավման տեխնոլոգիական լուծումներ (HealthTech)
- ֆինանսական տեխնոլոգիաներ (FinTech)

- կայուն զարգացում, շրջակա միջավայր, կանաչ տեխնոլոգիաներ և էներգաարդյունավետություն
- հանրային, քաղաքային կամ սոցիալական խնդիրների թվային և ինժեներական լուծումներ
- այլ

Նշված ցանկը սահմանափակող չէ: Թիմը կարող է ներկայացնել այլ ոլորտի նախագիծ, եթե այն ունի հստակ տեխնոլոգիական կամ ինժեներական բաղադրիչ և լուծում է իրական կամ հիմնավորված խնդիրը:

7. Նորարարական նախագծի պարտադիր պահանջները

Մրցույթին ներկայացվող յուրաքանչյուր նախագիծ պետք է բավարարի հետևյալ հիմնական պահանջներին.

- Խնդրի հստակ ձևակերպում. պետք է նկարագրված լինի, թե ինչ խնդիր է լուծվում, ում համար և ինչու է այն արդիական:
- Նորարարական արժեք. պետք է պարզ ներկայացվի, թե ինչով է առաջարկվող լուծումը տարբերվում առկա կամ սովորական մոտեցումներից:
- Տեխնիկական հիմնավորում. պետք է ներկայացվեն ընտրված տեխնոլոգիաները, նախագծային կառուցվածքը և հիմնական տեխնիկական որոշումները:
- Աշխատունակ լուծում. սարքային նախագծի դեպքում պարտադիր է ֆիզիկական գործող մոդել/նախատիպ, ծրագրային նախագծի դեպքում՝ գործող ցուցադրելի ծրագրային տարբերակ, իսկ համակցված նախագծի դեպքում՝ ինտեգրված աշխատող համակարգ:
- Փորձարկում և ապացույցներ. թիմը պետք է ներկայացնի տվյալներ, չափումներ, թեստեր կամ այլ ապացույցներ, որոնք հաստատում են լուծման գործունակությունը:
- Կիրառելիություն. պետք է հիմնավորվի լուծման գործնական կիրառման հնարավորությունը և օգտվողի կամ շահառուի համար ստեղծվող արժեքը:
- Զարգացման ներուժ. պետք է ներկայացվի, թե ինչպես կարող է նախագիծը հետագայում կատարելագործվել, մասշտաբավորվել կամ կիրառվել ավելի լայն միջավայրում:
- Փաստաթղթավորում. նախագիծը պետք է ուղեկցվի անհրաժեշտ տեխնիկական և ներկայացման նյութերով:
- Անվտանգություն և օրինականություն. նախագիծը և դրա ցուցադրումը չպետք է ստեղծեն վտանգ և պետք է համապատասխանեն մրցույթի տարածքում գործող անվտանգության կանոններին:

Չեն ընդունվում որպես ավարտված նախագիծ. միայն գաղափարի նկարագրությունը, առանց գործունակության ցուցադրման հնարավորության, ինչպես նաև այն աշխատանքները, որոնց տեխնիկական ներդրումը կամ թիմի սեփական մասնակցությունը հնարավոր չէ հիմնավորել:

8. Նախագծի տեխնիկական հաշվետվության միասնական ձևաչափ

Գրանցման և հետագա գնահատման հավասարությունը ապահովելու համար յուրաքանչյուր թիմի նախագծի նկարագրությունը նպատակահարմար է կառուցել հետևյալ բաժիններով.

- նախագծի անվանումը,
- խնդրի նկարագրությունը և թիրախային շահառուն,
- նախագծի նպատակը և ակնկալվող արդյունքը,
- առաջարկվող լուծման համառոտ նկարագրությունը,
- նորարարական կամ տարբերակիչ բաղադրիչը,
- տեխնիկական կառուցվածքը և կիրառվող տեխնոլոգիաները,
- նախատիպի կամ ծրագրային լուծման նկարագրությունը,
- փորձարկման եղանակը և հիմնական արդյունքները,
- գործնական կիրառելիությունը,
- զարգացման և մասշտաբավորման հնարավորությունները:

9. Մրցույթի իրականացման փուլերը

Փուլ 1. Մրցույթի հայտարարում. Հրապարակվում են 2026 թվականի թեման, մրցութային տարակարգերը, մասնակցության պայմանները, նախագծերի հիմնական պահանջները, գնահատման չափանիշները և ժամանակացույցը:

Փուլ 2. Թիմերի գրանցում և անձնական կաբինետ https://competitions.polytechnic.am/ կայքում. Թիմերը լրացնում են առցանց գրանցման հայտը՝ նշելով մրցույթի տարակարգը, նախագծի տեսակը, լուծման ոլորտային ուղղվածությունը և ներկայացնում նախագծի անվանումը: Գրանցումից հետո յուրաքանչյուր թիմ ձևավորում է անձնական կաբինետ, ստանում է նույնականացման համար (Team ID) և մրցույթին մասնակցությունը հաստատումը պահանջող նամակ: Թիմի բոլոր գրանցված մասնակիցները պետք է հաստատեն իրենց մասնակցությունը, թիմի վերջանական գրանցումը ավարտելու համար: Գրանցումից հետո անձնական կաբինետում տվյալների խմբագրումը և մուտքագրումը համակարգում է միայն թիմի ղեկավարը: Անձնական կաբինետում բոլոր տվյալները խմբագրելի են մինչև նախագծի վերջնական հանձնումը՝ “Հաստատել և հանձնել նախագիծը” կոճակի միջոցով: Նախագծի վերջնական հանձնումից հետո տվյալների խմբագրում հնարավոր չէ իրականացնել: Մինչև տվյալների վերջնական հանձնումը, տվյալները անձնական կաբինետում հիշելու համար կիրառել «Պահպանել սևագիրը» կոճակը:

Փուլ 3. Նախագծերի մշակում. Թիմերը սահմանված ժամանակահատվածում նախագծում, իրականացնում և փորձարկում են իրենց լուծումները: Կարող են կազմակերպվել տեխնիկական հարցուպատասխան հանդիպումներ, մենթորական հանդիպումներ, թեմատիկ վեբինարներ և աշխատարաններ: Թիմը անհրաժեշտ խորհրդատվությունը և աջակցությունը կարող է ստանալ ամրագրելով խորհրդատվության ժամը, որ հասանելի է անձնական կաբինետում: Մինչև նախագծի վերջնական հանձնումը յուրաքանչյուր թիմ կարող է ամրագրել շաբաթական 2 խորհրդատվական հանդիպում և աշխատարանի ամրագրում:

Փուլ 4. Նախագծային փաթեթի ներկայացում. Թիմերը սահմանված ժամկետում ներկայացնում են ամբողջական նախագծային փաթեթը, լուծման աշխատունակությունը հաստատող նյութերը՝ համաձայն նախագծի տեխնիկական հաշվետվության միասնական ձևաչափի:

Փուլ 5. Նախնական գնահատում. Փորձագիտական հանձնաժողովը ստուգում է նախագծերի համապատասխանությունը պահանջներին և ընտրում եզրափակիչ փուլ անցնող թիմերին:

Փուլ 6. Եզրափակիչ ցուցադրություն և գնահատում. Եզրափակիչ փուլը կազմակերպվում է ՀԱՊՀ-ում: Թիմերը ցուցադրական գոտում ներկայացնում են իրենց նախագծերը, իրականացնում կենդանի ցուցադրություն և պատասխանում ժյուրիի հարցերին:

10. Ներկայացվող նյութերի փաթեթը

Եզրափակիչ փուլում գնահատման համար յուրաքանչյուր թիմ պետք է ներկայացնի ստուգելի և ցուցադրելի նյութերի փաթեթ: Առաջարկվող պարտադիր բաղադրիչներն են՝

- տեխնիկական հաշվետվություն՝ խնդրի, լուծման, կառուցվածքի, կիրառվող տեխնոլոգիաների և արդյունքների նկարագրությամբ,
- 3-5 րոպե տևողությամբ տեսանյութ՝ լուծման աշխատունակության ցուցադրմամբ,
- տեխնիկական ապացույցներ՝ ըստ նախագծի տեսակի՝ ծրագրային կոդ, սխեմաներ, CAD մոդելներ, մոդելավորման արդյունքներ, չափումների տվյալներ, թեստերի արդյունքներ, լուսանկարներ և այլ նյութեր,
- նախագծի ցուցադրական պաստառ կամ մեկ էջանոց ամփոփ նկարագիր՝ եզրափակիչ ցուցադրության համար,
- եզրափակիչ ներկայացում և կենդանի ցուցադրում (demo):

Ներկայացվող նյութերի վերջնական ծավալը և ձևաչափը սահմանվում են տվյալ տարվա մրցույթի պաշտոնական հայտարարությամբ:

11. Նորարարական նախագծերի ցուցադրման գոտին

Եզրափակիչ միջոցառման ընթացքում նպատակահարմար է ձևավորել նորարարական նախագծերի ցուցադրման հատուկ գոտի, որտեղ եզրափակիչ թիմերը կունենան իրենց նախագծերը ներկայացնելու և աշխատունակությունը ցուցադրելու հնարավորություն:

Ցուցադրության ընթացքում՝

- յուրաքանչյուր թիմին տրամադրվում է նախագծի ներկայացման համար սահմանված տարածք,
- թիմը ցուցադրում է ֆիզիկական նախատիպը կամ ծրագրային լուծումը,
- ժյուրին սահմանված ժամանակացույցով այցելում է նախագծերի ցուցադրման գոտի,
- թիմերը ներկայացնում են նախագծի հիմնական գաղափարը, նորարարական արժեքը և արդյունքները,
- ժյուրին կարող է պահանջել լրացուցիչ տեխնիկական ցուցադրում կամ հարցուպատասխան առանձին գնահատման հատվածում:

Ցուցադրման ձևաչափը միաժամանակ հնարավորություն է տալիս նախագծերը ներկայացնել նաև ուսումնական հաստատությունների, արդյունաբերական գործընկերների և այցելուների լայն շրջանակին:

12. Գնահատման համակարգը

Գնահատման չափանիշ	Բովանդակություն	Առավելագույն միավոր
Խնդրի արդիականություն և նպատակ	Խնդրի հստակություն, կարևորություն և նպատակային շահառուի ճիշտ սահմանում	10
Նորարարություն, ստեղծարարություն և յուրահատկություն	Լուծման նորությունը, տարբերակիչ մոտեցումը և ստեղծարարությունը	20
Տեխնիկական նախագծում և կառուցվածք	Ճարտարապետություն, բաղադրիչների ընտրություն, ինտեգրում և տեխնիկական հիմնավորում	15
Աշխատունակություն և ցուցադրում	Նախատիպի կամ ծրագրային լուծման փաստացի գործունակությունը	15
Իրականացման և կիրառման իրատեսականություն	Գործնական կիրառելիություն, իրագործելիություն և համապատասխանության մակարդակ	10
Փորձարկում և արդյունքների հավաստիություն	Թեստերի, չափումների, տվյալների կամ այլ ստուգելի ապացույցների որակ	10
Զարգացման և մասշտաբավորման ներուժ	Հետագա կատարելագործման, ընդլայնման կամ կիրառման հնարավորությունները	10
Կայունություն և ազդեցություն	Բնապահպանական, սոցիալական կամ այլ դրական ազդեցություն՝ ըստ նախագծի բնույթի	5
Օգտագործման հարմարավետություն, ներկայացում և փաստաթղթավորում	Օգտվողի փորձառություն, հաղորդակցման որակ և նախագծի փաստաթղթավորվածություն	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ		**100**

Գնահատման չափանիշների կշիռները կարող են փոքր չափով տարբերակվել ըստ դպրոցական, ՄՄԿ և բուհական կատեգորիաների՝ հաշվի առնելով մասնակիցների պատրաստվածության մակարդակը:

13. Ժյուրին և գնահատման կազմակերպումը

Եզրափակիչ նախագծերը գնահատվում են փորձագիտական ժյուրիի կողմից: Ժյուրիի կազմում նպատակահարմար է ընդգրկել ՀԱՊՀ ներկայացուցիչների, այլ ուսումնական հաստատությունների մասնագետների, տեխնոլոգիական ընկերությունների ինժեներների և համապատասխան ոլորտների փորձագետների:

Ժյուրին գնահատում է ոչ միայն նախագծի գաղափարը, այլ նաև իրականացման որակը, աշխատունակությունը, տեխնիկական հիմնավորումը, նորարարական արժեքը և թիմի կողմից ներկայացվող ապացույցները: Եթե ժյուրիի անդամն ունի ուղղակի շահերի բախում որևէ թիմի հետ, նա չի մասնակցում տվյալ թիմի գնահատմանը:

14. Ընդհանուր վարքագծային և անվտանգության պահանջները

Մրցույթի բոլոր մասնակիցները պարտավոր են գործել անվտանգ, օրինական և մասնագիտական վարքագծի սկզբունքներին համապատասխան: Մրցույթի և նախագծերի ցուցադրման տարածքներում արգելվում են այնպիսի գործողություններ, որոնք կարող են վտանգել մարդկանց, վնասել այլ թիմերի գույքը կամ խաթարել մրցույթի բնականոն ընթացքը:

- չի թույլատրվում առանց թույլտվության դիպչել կամ օգտագործել այլ թիմի նախագիծը, սարքավորումները կամ գործիքները,
- վտանգավոր նյութերի, բարձր ռիսկ ունեցող սարքերի կամ վտանգավոր փորձարկումների օգտագործումը թույլատրվում է միայն կազմակերպչի նախնական հաստատմամբ և սահմանված անվտանգության պայմաններով,
- թիմը պատասխանատու է իր նախագծի անվտանգ ներկայացման և ցուցադրման համար,
- կազմակերպիչը կարող է դադարեցնել այն նախագծի ցուցադրումը, որը վտանգ է ներկայացնում մասնակիցների կամ այցելուների համար:

15. Արդյունաբերական և տեխնոլոգիական գործընկերների ներգրավումը

2026 թվականի «Նորարարական մարտահրավերներ» ուղղությունը կարող է ծառայել որպես համալսարան-արդյունաբերություն համագործակցության գործնական հարթակ:
Գործընկերները կարող են ներգրավվել որպես՝

- մրցույթի գործընկեր,
- նորարարական մարտահրավերի կամ խնդրի առաջարկող/հովանավոր,
- տեխնոլոգիական գործընկեր,
- սարքավորումների գործընկեր,
- մրցանակային հովանավոր,
- փորձագիտական ժյուրիի անդամ:

Գործընկեր կազմակերպությունները կարող են առաջարկել իրական տեխնոլոգիական կամ արդյունաբերական խնդիրներ, տրամադրել փորձագիտական մենթորություն և աջակցել լավագույն նախագծերի հետագա զարգացմանը:

16. Առաջարկվող 2026 թվականի ժամանակացույցը

Ժամանակահատված	Գործողություն
Շաբաթ 1	Մրցույթի պաշտոնական հայտարարում և «Նորարարական մարտահրավերներ» թեմայի հրապարակում
Շաբաթ 1-2	Թիմերի գրանցում և նախագծի/մարտահրավերի նախնական նկարագրության ներկայացում
Շաբաթ 2-6	Նախագծերի մշակում, մենթորություն, հարցուպատասխան և տեխնիկական աջակցություն
Շաբաթ 7	Ամբողջական նախագծային փաթեթի ներկայացում
Շաբաթ 8	Նախնական փորձագիտական գնահատում
Շաբաթ 9	Եզրափակիչ թիմերի հայտարարում և ցուցադրության նախապատրաստում
Շաբաթ 10	ՀԱՊՀ-ում եզրափակիչ ցուցադրություն, ժյուրիի գնահատում և մրցանակաբաշխություն

17. Մրցանակներ և ճանաչում

Յուրաքանչյուր մրցութային տարակարգում սահմանվում են առաջին, երկրորդ և երրորդ տեղերի մրցանակներ:

Դպրոցական տարակարգ՝

- առաջին տեղ՝ 500 000 ՀՀ դրամ
- երկրորդ տեղ՝ 400 000 ՀՀ դրամ
- երրորդ տեղ՝ 300 000 ՀՀ դրամ

ՄՄԿ տարակարգ՝

- առաջին տեղ՝ 500 000 ՀՀ դրամ
- երկրորդ տեղ՝ 400 000 ՀՀ դրամ
- երրորդ տեղ՝ 300 000 ՀՀ դրամ

Բուհական տարակարգ՝

- առաջին տեղ՝ 2 000 000 ՀՀ դրամ
- երկրորդ տեղ՝ 1 500 000 ՀՀ դրամ
- երրորդ տեղ՝ 1 000 000 ՀՀ դրամ

Խրախուսական մրցանակներ՝

- Լավագույն նորարարական լուծում,
- Լավագույն տեխնիկական իրականացում,
- Լավագույն սոցիալական կամ բնապահպանական ազդեցություն,
- Ժյուրիի հատուկ մրցանակ,
- Արդյունաբերական գործընկերների ընտրության մրցանակ:

Հաղթողներին կարող են տրամադրվել հավաստագրեր, դրամական կամ տեխնոլոգիական մրցանակներ, մենթորության կամ պրակտիկայի հնարավորություններ, ինչպես նաև աջակցություն հետագա մրցույթների կամ զարգացման ծրագրերի մասնակցության համար: